գրչահատը, մի աշտանակ, նոյնպէս իրանց տեղումն էին: Մի մազ իր տեղից չէր շարժուել: Այնտեղ դեռ դրած էին մի քանի պղնձէ դրամներ, որ ծառան ցոյց տալով ասաց, թէ վերջին օրերում այնքանն էր մնացել «լուսահոգոէ ծախքի համար: Ոչինչ չէր պակասել: Պակաս էր միայն այն անձը, որ խորին աղքատութեան մէջ այնտեղ աշխատում էր: Գրասեղանի վրայ դրուած էր եւ նրա սպիտակ թաշկինակը, որի վրայ թողեց նա վերջին արեան բիծը եւ աւանդեց հոգին...

— Լաւ նայեցէ՛ք, պարոն, — խօսեց ծառան, — տեսնո՞ւմ էք, ոչինչ պակաս չէ: Ես շան նման ամէն գիշեր պառկում էի այդ խուցի դռանը, մի ճանճ անգամ չէի թողնում, որ ներս մտնէ:

Ալեւոր աբեղան պատմեց, թէ իրաւ որ, նա ամառ եւ ձմեռ, ձիւնի եւ անձրեւի տակ, պառկում էր խուցի դռանը եւ, իր ծանր մահակը կուրծքին սեղմած, ամբողջ գիշեր անքուն էր մնում: Ամէն առաւօտ բաց էր անում խուցի դռները, աւելում էր, մաքրում էր, անկողինն ուղղում էր, դրա սեղանի վրայ դրած առարկաների փոշին սրբում էր, յետոյ ամէն ինչ իր սովորական տեղումն էր դնում, որ իր պարոնը մի անկարգութեան չնկատէ, թէեւ պարոնը վաղուց մեռած էր:

— Բայց նրա հոգին նայում էր երկնքից, — նկատեց ծառան, ձեռքը դէպի վեր տանելով: — Մեռնելու միջոցին ինձ ասաց լուսահոգին, «Ռաշիդ, այդ ամէնը այդպէս կը պահես, մինչեւ նա կգայ»... Ես ինչպէ՞ս նրա ասածը չկատարէի:

Արտասուքը թոյլ չտոեց բարեսիրտ շատախցուն աւարտել իր խօսքը, որին մենք տեսանք այն ժամանակ, երբ դեռ պատանի էր, եւ իր պարոնի խոհանոցում մենամարտում էր Ֆարհատի հետ: Այժմ մի հասուն, առողջ երիտասարդ էր դարձել, բայց դեռ վաղեմի պարզութիւնը մնացել էր նրա մէջ:

Նա ձեռքը տարաւ դէպի կուրծքը, սկսեց բաց անել կոճակները: Մերկ կուրծքի վրայ երեւաց մի շղթայ, որ անցուցած էր պարանոցից, իսկ նրա ծայրին երկաթեայ օղակից քարշ էր ընկած մի բանալի, նոյն ձեւով, որպէս հաւատաւոր մարդիկ խաչ են կախ տալիս շապկի տակից:

— Ընդունեցէք այդ բանալին, պարոն, — ձեռքը մեկնեց ծառան: — Լուսահոգին ասաց, Ռաշիդ, այդ բանալին քեզ մօտ կը պահես, մինչեւ նա կը գայ, եւ միայն նրան կը յանձնես: Հիմա, փառք աստծոյ, եկաք, առէք բանալին:

Պարոնը ընդունեց բանալին: